

դալ առ նոսա եւ ասել. Մաճկունք
Հայաստանի, որդիք սիրասունք Վեհա-
փառ Հայրապետիս մերոյ Գէորգայ Դ,
զարթիք ի ձերմէ մահահանգոյն թըմբ-
րութենէդ յուսահատութեան, յոր
ընկճեալ կայք յամաց բազմաց հետէ,
մոռացօնս գործեցէք վայրիկ մի աղե-
տիցն մեծաց զորս կրեցէքն եւ սպառե-
ցէք. սրբեցէք զարտասուս յաջաց ձե-
րոյ, եւ տեսէք զակնկալութեանցն ձե-
րոյ նշոյլս պայծառապէս փայլատա-
կեալ առ տեղեօքն՝ յորս կոխեցին լու-
սաշաւիղ՝ ոտք Նահապետին Նոյի եւ
Նուսաուրչին ազգիս Գրիգորի Պարթեւի
եւ Ներսիսի մեծի, եւ Սահակեանցն եւ
Մեսրոպեանց, եւ զմայլեալք բաժակաւ
անտրտում ուրախութեան՝ եկայք
խառնեցէք զձայնս հրճուանաց ձերոց
ընդ բարեբանութեանց մերոց յորդոր-
մունս եւ օրհնեցէք զսկզբնապատճառն
այսմ բարեաց:

Հապա, օրհնեցէք, որդիք շնորհա-
պարտք, զբարեխնամս ձեր Հայրապետ
ի բարենշան յայսմ տարեկանի, ի մե-
ծաշուք հանգիսի տօնական աւուրս
սրբոյն Գէորգայ քաջայաղթ զօրալա-
րի: Մաղթեցէք Անուանակցի նորին
կեանս երկարաձիգս, զի եւս քան զեւս
զուարճացի ի տեսիլ բարգաւաճելոյ
իւրումն ձեռակերտի ընդ մեծազօր հո-
փանաւորութեամբ Օգոստափառ Կայ-
սերն Ռուսաց, եւ աստատին վայելեսցէ
ընդ ամս բազումս ի յոգնաբեղուն ար-
գիւնս բարեաց օժտելոց յիւրմէն ի
փառս եւ ի պայծառութիւն Հայաս-
տանեայցս եկեղեցւոյ եւ Ազգի:

Հետեւեալ երկու ուղերձներէն մինը
ի գիմաց աշակերտաց ձեմարանի՝ եւ
միւսը ի գիմաց աշակերտահեաց Ծխ.
Օրիորդաց Դպրոցին Վաղարշապատու
կարգացուեցան Վեհարանում:

ԱՌ

ԱՍՏՈՒԵՍԵՂՍԵԳ ՎԵՀԱՓԵԱ

Տ, Տ, ԳԵՈՐԳ Գ,

Ոգիդ անմահ, որ ի բարձանց հայրենեաց
Աւետաւոր դիմեալ ի ձայն հրճուանաց
Գաս տարփողել մեզ ցընծութիւն անըսպառ. —
Ողջամբ գալուստ քո ի տաճարս վեհալսյոր:

Ձայդ գեղանի լուսաճաճանչ դու պարզես,
Նոր առաւօտ՝ նոր օր կենաց ծագէ մեզ,
Հայրապետիս մերոյ աւուրք գեղածին
Գեղափըթիթ բողբոջեն փառքս կըրկին:

Դու զՎեհին մեր անուան չքքնող յիշատակ
Հանգոյն շողից զօր մեզ սրբութ արեգակ
Ձարթուցանես ի սիրտ ի քնարս ոսկեւար,
Վեհիս հանդէպ խայտայ որդւոց իւր կաճառ:

Յօրչափ ցընծան լերինք Հայոց ծաղկածին
Եւ շողշողեն աստեղք պայծառ ի յերկին,
Որդւոց երամբ բողբոջեն պերճ սլոսակ
Ի բիւր ծաղկանց նըմին գունակըս գունակ:

Մաղթեմք, ով Հայր, ի փառս ազգիս քո հօտին
երկարեցին աւուրք կենացըդ քոյին,
Ձայս ի սըրտէ յաւուր պաշտպան Քո Սըրբոյ
Միաբարբառ հանեմք առ Տէր ձօն սիրոյ:

ՉԵՐՈՒՄԴ ՎԵՀԱՓԵԱՌՈՒԹԵԱՆ

Ամենախոնարհ որդի եւ աշակերտ Չորրորդ դասարանի

Գեորգեան ձեմարանի

ՍԻՄԵՈՆ ՀԱՐՈՒՄԵԱՆՅՈՒՆՅԱՆ